



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻՑ*

Տայր զհրեր պարունության դասից, որ կարելի է ապրել մեռնելով, բայց ոչ մահանալ, քիզախոց վերջից արյան փոխարեն կյանքի սեր հորդել, արևաքամ մարմնում կրել հոգի վեհ և անխոցելի, որ ապրի հավերժ ոգին հայ կյանքի: Ով ականջ ունի, բլթակ հավարտ հայոց պարունության, ևս կհաստատի մեթոյ անվարան, որ Եկեղեցին է եղել հայկազյան ազգի անմեռ այդ ոգին: Եվ ո՞վ կուրանա, որ եղել է ևս ծնող մի բարի, սրբություն սրբոց ամեն մի հայի, անառիկ ամբոց: Այո, ևս եղել է և հավերժ կմնա զգաստությանց մայր, որ զարդարում է իր զարվակների կյանքի ուղին անմահության անանց փառքով:

(«Էջմիածին», 1985, ԺԱ-ԺԲ, էջ 56)

1915 թվական... Երիտթուրքերը պարունության թևն ելան սոված զայլերի իրենց ոհմակով: Տոշուրվեց ժողովուրդը հայոց: Մեկուկես միլիոն ձայների հառաջ մնաց օդում կախ, որ պիրի հեջեր, ուժգին թափով վրեժի կոչեր, Մարդարապարում հրաշագործեր, հայ զինվորների շուրթերին անմեռ դառնար վասն ազատության և արդարության քայլերգ հաղթական: Եվ ո՞վ է լսել երբևէ, որ իսավարդ կովի լույսի դեմ և հաղթի նրան, որքան էլ լույսն այդ լինի թույլ, նվաղ:

(«Էջմիածին», 1985, ԺԱ-ԺԲ, էջ 57)

* Ներկայացվող հարվածները բաղված են Վեհափառ Հայրապետի փարբեր փարիների քարոզներից, հարցազրույցներից և հոդվածներից, որոնք փպագրվել են «Էջմիածին» ամսագրում և՛ Սփյուռքի ու Հայաստանի մամուլում:

Երկարաձիգ դարերի կուսական երկունքով ծնեց ժողովուրդը հայոց հրաշք մի մանուկ՝ երկիր Նայասրան, որի արեղծագործ մեկ օրը համարժեք պիտի դառնար նրա ապրած մեկ տարվան, նվաճումների տարին՝ ողջ դարի:

(«Էջմիածին», 1985, ԺԱ-ԺԲ, էջ 57)

Ջրիստոսի խաղաղությունը, որը համակ սեր է, հույս և հավատք, աներեր վեմն է մարդկային կյանքի կայուն և համապարփակ խաղաղության, այն վեմը, որի վրա «Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պապա-հեցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեցին» (Մաղմ. 2Դ 11):

(«Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 46)

Ջրիստոնեության երկհազարամյա պատմության ընթացքին Խոստաղության Սերմնացանի բարի հունդերը միշտ չէ, որ ընկել են մարդկային հոգու և մտքի պարարտ ակուններում, այլ ավելի հաճախ ավերարանական սերմնացանի առակի նման՝ չոր, տարասկոտ ու որոմնակալած անդաստաններում: Իսկ ավերարանական ճշմարտությունն այս է՝ «Չի ոչ էթէ ի փշոց քաղեն թուզ եւ ոչ ի մորենոյ կթեն խաղող» (Ղուկ. Զ 44): Արդարև, թշնամանքից սիրո և արդարության պրոդուկտներ չես կարող քաղել և ոչ էլ պատերազմի, խավարի ու արյան մեջ առաջընթաց և զարգացում արձանագրել:

(«Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 46)

Ջաղաքակրթության զարգացման մեր դարի տիեզերական չափանիշները հասարակական-տնտեսական կյանքում և բնության մեջ երբեմն թողնում են այնպիսի ցավալի հետքեր, որոնք ոչ միայն խոչընդոտում և կասեցնում են կենսաց ծառի դարար, կենսունակ ուրերի բնական աճը, այլև երբեմն արյունծորան դարձնում հասարակուն միջուկը:

(«Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 46)

Դատական իշխանությունը հասարակական կյանքի արտիոդ գարկերակն է՝ կոչված կենարար արյուն և ավիշ մղելու հարկապես այնպեղ, ուր վնասված, ինդարթուրված կամ ուրնահարված են ճշմարտությունը, արդարությունը և իրավունքը, այնպեղ, ուր վրանգված է մարդը՝ իր բարոյակալնով ու կենսական շահերով: Արդարն, դատավորը արդարության առաքյալն է, սպասավորն ու իշխանավորը, և հարկ է, որ օրենսգեւր լինի, բայց ոչ միայն, քանզի օրենքը բարին հաստատելու համար է: Ուր Բարին է, այնպեղ Ասրված է՝ Իր օրհնությանը, շնորհների ու պարգևների առարամենն բաշխունով:

(Դատավորների երդման արարողության խոսքից,
«Էջմիածին», 1999, Ա, էջ 36)

Դժվար է ճանաչում ձեռք բերելը, առավել դժվար՝ գնահատված ու սիրված լինելը: Տամրնդհանուր ճանաչումն ու սերը անխուսափելիորեն գալիս են, երբ ձեռաց գործերում, հոգու և մարքի արարումներում կիզակիրվում են հայրենի երկրի և ժողովրդի ձեռքբերումներն ու կորուստները, սլացքներն ու սպասումները, բացահայտվում է մարդն իր ներաշխարհով:

(«Էջմիածին», 1999, Դ, էջ 32)

«Ելն ի Վիրապէն» րոնը հաղթանակի րոն է, մեր ժողովրդի համար այս օրը հավարքի, հաղթանակի օր է, և հաղթանակի խորհուրդը խորացրել է այս նշանի՝ Լուսավորչի Ս. Աջի մեջ, որը դարեր շարունակ առաջնորդել է մեր ժողովրդին, միշտ ամուր պահելով նրա հավարդը՝ գամված այս Աջին, և պարահակուն չէ, որ մեր հայրերից Դավրիժեցին արձանագրել է, թե յուրաքանչյուր հայի հոգին կապված է Լուսավորչի Աջին:

(«Էջմիածին», 1999, Ե-Զ, էջ 46)

Ըրհարունությունը մեր ժողովրդի համար արդարքին զգեստավորում չէ, այլ մաշկի գույն, նկարագիր, էություն, որ ծաղկող գրչով դրոշմվել է մագաղաթին և մարյաններ շնչավորել, աներկբա հավարով հայրենյաց մեր

սուրբ հողին մարմնավորվել որպես խաչքար, վանք ու եկեղեցի: Աստվածաշնչյան է հայաստանը, հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու գոյությանը, մեր ժողովրդի անցյալ ու ներկա հիշարարկներով, ավելի ևս՝ նորոշյալ մեր հավարի վերագարթներով, որպես երաշխիք աստվածաշնչյան մեր հարստության:

(«Էջմիածին», 1999, Ե-Զ, էջ 47-48)

Մարդարապարի նվիրագործված խորհուրդը մեր նախահարց թանկագին ավանդն է մեզ, որ հազարապարկվում է մեր հոգու զուրյա մրմունջներով ու սևակյան գրչով՝ հայոց ժողովրդի իղձերի ու տեսիլքների ավազանից ծնունդ առած շինացող պարզամով. «Մերունդներ, դուք ձեզ ճանաչեք Մարդարապարից»: Ծանաչե՛ք Մարդարապարի ոգին՝ ապրեցնող ոգին, որ հաղթական է նախ և առաջ մեր՝ Ասրծուն և ապա ինքներս մեզ ապավինելու քաջությանը ու վստահությանը, որպես արտահայտություն այն ճշմարտության, որ ամեն ժողովուրդ ինքն է իր կորուստների ու անկումների պատասխանատուն, ինչպես և նվաճումների ու հաղթանակների կերտողը:

(Մարդարապարի 80-ամյակի հանդիսության խոսքից)

«Ո՛ր է մահ, յաղթութիւն քո. ո՛ր է, դժոխք, խայթոց քո» (Ա Կորնթ. ԺԵ 55): Հարության հաղթական խորհրդին առհավեր վստահած մեր ժողովուրդը այս հարցադրումով դարեր ի վեր մահեր է ոտնակոխել՝ հավարարիմ մնալով հավարքով ամուր իր հույսին և սիրով լուսառար իր լավարենությունը:

(Երկրաշարժի տասնամյա տարելիցի խոսքից)

Շուրջ 2000 տարիներ առաջ, այսպիսի մի գիշեր, Արևելքի երկիները ողողված էր խորհրդավոր լույսով՝ Լուսաստրի շողարձակ ու պայծառ շիթերով, որոնց հեղ վերստարող հրեշտակները սաղմոսերգում էին Աստվածորդու՝ Մանուկ Դատախ ծնունդը, անընդմեջ կրկնելով՝ «Փառք Ասրծուն բարձունքներում, և երկրի վրա խաղաղություն, և հաճություն մարդկանց մեջ»: Մթանելի գիշերվա վեհագույն խորհուրդը տեսանելի եղավ խորագեղ մոզերին: Վեռու-հեռուններից նրանք ճանապարհվել էին Լուսաստրի առաջ-նորոշությանը՝ երկրպագելու, իմաստուն նվերներ մատուցելու նորածին

մանկանը՝ ճանաչելով Նրան արքա երկնային և երկրային թագավորությունների, որպես Ասրժո Որդի և Ասրված:

Գերեվարված, աննշան մի երկրի փոքրիկ քաղաքում, ամենահամեստ հարկի փակ ծնունդ էր առել արքա, որ ջունեք հաբարություն, ծառուներ, գորքեր ու զենք, սակայն հաղթեց աշխարհին: Նաղթեց Իր Սիրով: Սիրով մուտք գործեց խրճիթներ, նվաճեց անհասանելի թվացող պալատներ, հզոր թագավորություններ՝ ամենուր հասարակելով առ Ասրված Նախարքի վարաստություն, Նույս լավարեստություն, Սիրո ջերմություն, Սիրով՝ Նաշ րություն:

(Ս. Ծննդյան քարոզից, 1993)

20-րդ դարի պայմանության մեջ երկրորդ անգամ Նայոց երկնակամարում վարդազունող լույսի առավորները շողարձակում են եռագույնի վեհ ծածանումով: Երկրորդ անգամ հայ ժողովուրդը վերագրել է ազգային իր անկախ պետականությունը՝ կարևոր պայման ու հենարան, ներշնչման աղբյուր և համազգային նպատակների ու ծրագրերի շուրջ մեր ազգային համախմբման հաճախ հրավերք չարահանցող բացառիկ առիթ: Սիրով միաբանված միայն ի գորու ենք տեր կանգնել այդ առիթին և հասարակել ազատ ու անկախ, հզոր ու բարգավաճ Նայրենիք կերտելու մեր պարտքի գիրակցությունը, պարտաստական կամքն ու աներեր վարաստությունը:

(Նայասրանի անկախության փարեղարձին ասված խոսքից)

Մենք հոգևորականներ ենք, բայց անհարներ ենք, ունենք մեր նկարագիրը, հոգին ու արժանապարտությունը: Ծառան ենք Ասրժո, մեր ժողովրդի և մեր խղճի:

Որևէ զաղափար ընդունելի է մեզ համար այս երեք նվիրական հասկացություններին ներդաշնակվելու պարագային:

(Նոգևորականաց հավաքին ասված խոսքից, 1994)

Քրիստոնեական վարդապետության վեճը սերն է, և նրա բարոյականության հիմնադրություններում «իրավունք» և «պարզականություն» հասկացությունները անբակրելիորեն շաղկապված են:

(Քարոզից, 1994)

Պատմության շնթացքն այնպես էր զարգացել, որ մեր ժողովուրդը հետացել էր Նայ Եկեղեցուց, հայ հոգևոր արժեքներից, սակայն ամեն հայրորդի իր մարմուն, հոգուն ծրարել է հավատը, իր նախնյաց սրեղծագործ միտքը:

Այս իսկ պատճառով ծանր պարտականության առջև է գրկվում այսօր հայ հոգևորականը: Նա պետք է նոր հնչեղությանը, նոր հավատքով ու նոր սիրով մարտնչի դարձնի Զրիստոսի Ավետարանը. նրա վեհ, բարոյական առանցքների վրա խարսխի հայրորդու միտքն ու նկարագիրը:

(Քարոզից, 1994)

«Ես հաղթեցի աշխարհին»:

Աշխարհի ո՛չ մի տիրակալ, ո՛չ մի բռնակալ ու թագավոր, ո՛չ մի հեղափոխական երբևէ այսպես չի բարբառել: Բայց գալիս է Զրիստոս՝ սովորական մի հյուսնի որդի, և վարսահորեն ասում. «Ես հաղթեցի աշխարհին»:

(Ս. Նարոյան քարոզից, 1994)

Մենք պետք է գիրակցենք, որ նրանց (աղանդների - խմբ.) նկրտումները ազգադավ են, որ նրանք մեզ որպես «ընձա» շնչկնվածության ու թուլության բարդույթ են բերում, որից ձերբազատվելը հեղտ անհատի դժվար է լինելու:

Մուրք Էջմիածինը հայության սիրտն է: Էջմիածինը Ամերիկա հասած ծվարած հայի՛ հոգու մեջ է, Բեյրութում ու Նախկում փրկված, աշխարհի տարբեր ժազերում դեզերող հայի կարտուններում:

(Էջմիածնի փոնին ասված քարոզից, 1992)

Նայ ժողովրդի արյան ու հիշողության ծալքերում միշտ էլ եղել է հաղթելու, սպրելու մեծագույն ձգտումը. և մերը ոչ միայն մարտիրոսության պատ-

մություն է: Մեզանից յուրաքանչյուրն ունի իր Ավարայրը, որտեղ մաքառում է, րոզորում՝ հաղթելու վճռականությամբ: Եվ այդ ոչ միայն մարմնավոր գոյության, այլև նախ և առաջ վասն հոգևորի կրիվ է:

Նայ Եկեղեցին ազգային, սաբակուսակցական հասարակություն է և նա բոլոր հայերին իր զավակներն է նկատում՝ ջրարբերակելով նրանց զաղափարախոսական, քաղաքական համոզումները, բայց և միաժամանակ աշխարհակարգի փոփոխության, որպեսզի կուսակցական շահերը գերակա չդառնան ազգային մրսածոդության հանդեպ:

Նավարը, հույսը, սերը երբեք անբողջովին չեն բացարձեկ ու չեն բացարձեկ Աստուծան, բայց մարդուն մարդ կպահեն, առավել ևս, երբ այդ հավարը հայի՝ հավարն է, երբ հույսը մաքուր լույս է և այս մութությունի մեջ կախված վաղվա հոնյան է:

Խոնարհվում եմ մեր ժողովրդի հավարավոր հոգու և հանդուրժողակալության առջև: Այնքան ներողամիտ և լայնասիրտ է, որ նույնիսկ թվում է, թե անարարներ է առ Եկեղեցին իր նախանձախնդրության մեջ:

«Մահ իմացեալ անմահութիւն Ե» կարգախոսը պիտի փոխվի մեր ժողովրդի համար, այսուհետև պիտի ասենք. «Եյանք իմացյալ անմահութիւն Ե»:

Այո՛, մենք այլևս պիտի ապրելով ապրենք, հաղթելով ապրենք:

Նայրենասիրությունը բանաձևելու կարիք չունի. նրանով պիտի ապրեն, գործեն, արարեն:

Եկեղեցին մեր ժողովրդի հոգու ծննդավայրն է, ժողովրդի ոգեղեն արժեքների գանձարանը: Եկեղեցին եղել ու պետք է մնա ժողովրդի պարունության ու մշակույթի կրողը, կերպողը, ազգային հայրենասիրական ավանդ-

ներն ու ամսանդրությունները շարունակողը:

Չե՞ որ մեր եկեղեցիների գմբեթները նաև դեպի երկինք ներված մեր գոյարևման բռունցքներն են:

Քրիստոնեական դաստիարակությունը սիրո, հավատի բարի գործերի, ազնիվ նկարագրի, գեղեցիկի, արդարի ու ճշմարիտի գնահատման ուսմունք է, և դա ամենևին չի նշանակում մոլեռանդության սերմանել:

Տայ Առաքելական Եկեղեցին պայքար չի մղում որևէ կրոնական կազմակերպության դեմ: Մեր Եկեղեցին ունի մեկ նշանաբան՝ իրականացնել իր առաքելությունը ժողովրդի կյանքում: Վաջողությամբ և արդյունավետորեն իրականացնելու դեպքում կրոնական այլաժիև հոսանքների տարածումը կանխարգելելու խնդիր չի կարող լինել:

Եկեղեցու այժմյան առաջնահերթ խնդիրը հոգևոր զգացումը վայելելու կերպով հայ ընդհանրից ներս տարածելն է, Եկեղեցական տոնացույցը ժողովրդյան կյանքի հետ համահասոնելը, որպեսզի Եկեղեցու օրհնությունն ամեն պահի իր զավակաց հետ լինի:



Քրիստոսով իմաստավորված* կենաց ճանապարհը 2000 տարի անցել ենք՝ հաղթահարելով բազում փորձություն ու դժվարություն. «Նաւար քո կեցուցէ զքեզ»: Աներեք վստահությամբ սրտանձնել ենք ամենայն զրկանքների վասն հավատի, վասն հայրենյաց: Այսօր վերահաստատված Տայոց նոր անկախությունը, Արցախի ազատության անօտարելի իրավունքը ձեռք

* Սկսած այսպեղից, բերում ենք հավրածներ Նորին Սրբության Կաթողիկոսական ընկրությունից հետո խոսված Վայրապետական քարոզներից և Կոնդակներից:

ենք բերել սպասող, երջանիկ գալիքի ամենակարևոր գրավականներից մեկը: Մեր երկիրը գորացնելու, մեր կյանքը բարձր դարձնելու սրբազան պատասխանարվության համեմատությունը մղում է մեզ սիրով միաբանության, խաղաղ, սրեղծագործ կյանքի, որպեսզի 3-րդ հազարամյակ մուրթ գործենք վաստակյալ իրավունքով մեր տեղը հասարակած ժողովուրդների մեծ ընդհանրում:

20-րդ դարը մարդկային պատմության մեջ նշանավորվեց գիտական աննախընթաց նվաճումներով: Մարդը կյանքական աշխարհի ճանաչողության մեջ հաճախ մոռացավ Աստուծո գոյությունը, անրեսեց, որ անհրաժեշտ է հավասարազոր և առավել ևս գորացնել հոգևոր աշխարհը իր կյանքի: Նոր դարը կարող է հոգևորով իմաստավորման, քրիստոնեական բարոյականի վերարժևորման, որպեսզի գիտության նվաճումները ծառայեն միայն բարիքի սրեղծմանը, մարդկային երջանկությանը: Քաղաքակրթությունը փակուղի է մտնում, երբ չենք տեսնում, որ արարչագործ է փինգվերը, ուր ամենայնը շարկապված է ներդաշնակորեն, ուր ամենայնը բարիք է ծնում, երբ մենք Աստուծոց մեզ շնորհված կամքի ազարությանը ընդդրում ենք բարին, առաքինին, արդարն ու ճշմարիտը՝ Աստուծո կամքը:

(1999 թ. դեկտեմբերի 31-ին հեռարձակված քարեմուրի պարզամից. «Էջմիածին», 2000 թ., Ա, էջ 4-5)



Պարմության մեջ ակնթարթ է կարճարև այն ժամանակահատվածը, որ Մարդացյալ Աստված՝ Տիսուս Զրիստոս, գործեց մարդկանց մեջ: Այդ ակնթարթը փոխեց ժամանակի ընթացքը՝ ամենուր հասարակելով առ Աստված Նավարքի վստահություն, Տոյսի լավարեսություն, Սիրո ջերմություն, Սիրով՝ հաշրություն միմյանց և Աստուծո հետ: Եվ արդ, սիրելիներ, բաց է ճանապարհը դեպի Աստված, և մեզ է թողնված ընդորությունը:

Վերստին կանգնած ենք Աստվածահայրության հրաշքի առջև և երկուհազարեորդ անգամ ունկնդիր ենք «զի ծնա ձեզ այսօր Փրկիչ» երկնաաբ մեծ ավերիսին: Մարդկային հոգիներում երկուհազարեորդ անգամ այս ավերիսը նորոգում է վեհախորհուրդ գիշերվա հիասքանչ պահը Բեթղեհեմի: Երկուհազարեորդ անգամ մեր հոգու աջքով հեղնում ենք երկնքում պայծառ շողացող աստղի ընթացքին և լույսի արձակ շիթերի մեջ վերովարդող հրեշտակների հետ սաղմուեղգում. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14): Երկուհազարեորդ անգամ Մանուկ Տիսուսի սնարի առջև Արևելքի խորագետ մոզերի հետ «խոնարհեալ երկխդիս» երկրպագում, օրհնում և փառաբանում ենք

Մարդացյալ Ասործուն՝ քերկրաները սրտի, որ խոնարհ մատրիկն փոխարինելի են փառաշուք փաճարներ, փոռակյան հրապարակներ ու սրահներ, մոզերին և հովիվներին՝ քրիստոնյա պետություններ ու ժողովուրդներ՝ առաջնորդ Նովվապետներով, բազմահազար եկեղեցականներով, քրիստոնյա նախագահներով ու վարչապետներով: Փա՛նք Զրիստոսի ամենագործնելյան, որ լուսապսակ զարդարում է ամեն փարեմուր:

«Զրիստոս ծնաւ և յայրենցաւ»:

Զրիստոս ծնվեց, սակայն ոչ այլուր, եթե ոչ՝ մարդկանց՝ մեր հոգիներում՝ Իր Ավերարանի կենարար խոսքով ազնվացնելու մարդկանց միածումները, ուղղելու նրանց ձեռաց գործերը, ճշմարտության և բարու արժեքներով իմաստավորելու մարդկային կյանքը:

(Ծննդյան պարգամից. «Էջմիածին», 2000 թ., Ա, էջ 10-11)

Երկու հազարամյակ բազում ժողովուրդների համար Լուսո Խոդրան է երբեմնի ակշուք ու համեստ մատրիք Բեթղեհեմի, ուր Նախախնամության սահմանումով մարմնավորվեց Սերն Ասորվածային, ծնունդ առավ որպես խնամքի կարոտ մանուկ և Ասորվածամեկ գթոտ ձեռքերով խանձարուրվելով՝ դրվեց մատրում: Մանուկ Մուսի «րեղի բնակութեան» խորհրդաշար այս կամարներից ներս բոցաշունչ մարգարեի սրբախոս ձայնն է դողանցում առնիշտ՝ ժամանակի հեռուներից մեզ ավերելով. «Մեզ համար մանուկ ծնվեց» և «Նա պիտի ընտրի բարին»: Ասորվածային Իր Սիրով Սերն այցի եկավ մեզ՝ ընդմիջտ բացելու մեր առջև փրկության ուղին, որպես Լուս աշխարհ եկավ՝ լուսավորելու ճանապարհը դեպի Բարին: Ասորվածահայրությանը ժամանակի նոր պիտույրը՝ հեղափոխեց աշխարհը: Խոնարհ մատրից ճառագած Լուսը թափանցեց չորս ծագերը՝ մոլորակի՝ սփռելով սեր, խաղաղություն, եղբայրասիրություն ու համերաշխություն: Որքա՛ն մխիթարական է հավատալ, որ Ասորված մեզ հեր է, իմանալ, որ բաց է ճանապարհը դեպի Սերը, հուսալ, որ մարդկային մեր կյանքով գործակիցներն ենք մեր Տիրոջ՝ Մուսու Զրիստոսի փրկարար առաքելության:

Ասորվածահայրության փեկերական խորհուրդը Փրկի Սուրբ Ծննդյան 2000-րդ փարեդարձին համախմբեց քրիստոնյա երկրների հոգևոր ու աշխարհիկ պետերին Բեթղեհեմի Սուրբ Այրի մեջ, խոնարհվելու Խաղաղության Իշխանի, Սիրո Ավերարերի սևարին և Տիրաառք օրհնությունն արանալու իրենց ժողովուրդն ու պետությունը առաջնորդելու դեպի բարի առաքելություն:

Ազգ շնորհընկալ ենք, Տե՛ր:

Առաքյալներիդ լույս որևահեղբերից հաղթական Խաչդ հառնեց հայրեկյաց մեր հողին և կենաց Քո խորհրդով ծաղկեց մեր հողիներում, մեր մարյաններում, մեր քարերին: 301 թվականին Նշանդ հաղթության հայոց պերություն դրոշով առաջին անգամ երկինք պարզեցինք, որ 1700 րարի եղավ մեզ ուղեկից Բարին արարելու և զորավիզ՝ պարմության քառուղիներում մեզ բաժին ընկած փորձություններին դիմակայելու: Խաչդ լուսաբաղձ հավարքն է մեր ինքնությունը, Տե՛ր, արեղծարար մեր կամքը, ճշմարտության, արդարության, խաղաղության մեր իղձը: Հարությանդ հավարքով բազմիցս խաչվել ենք զողզոթաններում, վերապրել եղեռն, աշխարհացունեց երկրաշարժ, «մահ իմացեալ»-ով ենք պաշտպանել ազատության մեր իրավունքը և երկու աշխարհամարտ սպրած 20-րդ դարն սեսա ավարտում ենք հայաստանի նոր անկախության և Արցախի ազատ ապրելու արդար իրավունքի հաստատումով:

(Բերթեհեմի Սուրբ Այրում ասված քարոզից, 18 հունվարի 2000 թ., «Էջմիածին», Ա, էջ 45-47)

Ավարայրով՝ ու Մարդարապարով ենք արիացել, պերականությունը հաճախ կորցնելով՝ իմասրևացել, մեր հայրերի Աարծուն և մեր սուրբ նախնյաց հավարքին ապավինած, «ժամադրությունը Միտուսի հեր» հավարարմորեն պահած՝ նոր դարին հասել և Հարության շնչով Հարությունը վերակերտած «Աարծո սեփական ժողովուրդ» որպես՝ անկախ պերականության դրոշն ենք պարզել հայաստանում և Արցախում: Մեր զավակաց կյանքի թանկ գնով ու արյան հեղմամբ վերահասարարել ենք ազգերի մեծ ընարանկբում ազատ, խաղաղ ու արեղծագործ կյանքով ապրելու անուարրելի մեր իրավունքը:

Խաղաղության կոչով Զրիարու աշխարհ եկավ և նույն խաղաղության պարզամով թողեց երկրավոր կյանքը. «Խաղաղութիւն թողում մեզ, զխաղաղութիւն զիմ րամ մեզ»: Տիրոջ խաղաղությունը թող միշտ թեւածի մարդկային կյանքի երկնակամարում: Թող Ամենախնամ Աարված բազմազգ ու բազմալեզու ժողովուրդների բոլորանվեր ուխտապահությունը որպես անամպ ու կապույտ երկինք անխաթար պահպանի համայն ազգերի և մեր հայկյան սերնդի գլխավերում՝ ի փառս Հարուցյալ Փրկչի և ի պայծառություն քրիարուսազարմ իր ժողովրդի:

«Օրինութիւն Յարուցեալ Տեսուն մերոյ Յիտուսի Զրիարուսի եղիցի ընդ մեզ եւ ընդ ամենեկեանդ. ամէն»:

(Սուրբ Հարության Տաճարում ասված քարոզից, 23 հունվարի 2000 թ., «Էջմիածին», Ա, էջ 68-69)



Արարարի մարտի հայեացքի դիմաց Եռագոյնի վեհարանի նոր ծածանումով հայոց Ուարանում վերստին պարմական յուսատար օրեր է սպրում հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռը՝ 1700-ամեայ յիշողութեամբ, աշխարհասփիտ մեր ժողովրդին ի հոգևորս միատրելու նուիրական առաքելութեամբ:

Աշխարհասփիտ մեր ժողովրդի համար ցեղասպանութեամբ սկսուած դարն ասարտում է արցախեան ազատամարտի յաղթական շնչով, հայրենի հողի փոքրիկ մի հատումում Աւարծոյ շնորհով ու ողորմութեամբ, մեր արի կամքով հասարարում նոր անկախութեամբ: Տասնամեայ մարտումների, զոհողութիւնների ու թանկ կորուստների գնով իրականացել է դարատր մեր իղձը: Արդ, ինչպէ՛ս կարող ենք նահանջել ժամանակատր դժուարութիւնների առջև, ինքնակամ րրունել ահագնացող մահաբեր արրագաղթին: Ինչպէ՛ս կարող ենք հեռակալ ազատութեան լոյսով արժեւորում, անկախութեամբ զօրութիւն առնող եւ կեանք պարգևող Տող-հայրենիից, երբ դարերի մէջ բազմիցս հիմնիվեր վերաշինել ենք մեր րունը, որպէս փիւնիկ յառնել մոխիրներից: Արիանակք յոյսով ու հասարքով, զօրեպնդունք վրձնականութեամբ՝ մեր պարմութեան բեկումնային շրջադարձը սպրելու: Զինունք լատարեութեամբ, որ ի լրումն ժամանակաց, ի լրումն դարի՝ Աւարարանի լոյսով սիրոյ, իսաղաղութեան, արդարութեան ու հաշրութեան նոր առաւօր է բացունելու աշխարհի վրայ, մեր հայրենիքում:

հայ Եկեղեցին դարեր ի վեր եղել է անկախութեան սրբագան գաղափարի կրողը եւ արժարժողը հայ հոգիներում, սրբօրէն պահպանողը հայ ինքնութեան, մշակութային գանձարանը հայոց: Առաքելաշաւի իր ընթացքով, մեր սուրբ հայրերի ասարումատր ու հայրենապաշտ ոգով հայ Եկեղեցին պիրի շարունակի հայապահպան իր առաքելութիւնը հայրենիքում եւ Միխոքի հայոց կեանքում: Տոգետր կեանքը հայ գաղթօջախների վերաշինութեան ու վերածննդի հենքը դարձնելով, մեր Եկեղեցին՝ որպէս պարմականօրէն ձեւատրում համագգային կատոյց, անրապնդելու է աշխարհի բոլոր ծագերում սփռում հայութեան՝ միմեանց ու Մայր հայրենիքի հեր բազմակողմանի կապը՝ կենսունակ անցեալի մեր սուրբ յիշարակներով, անկախացեալ Մայր հայրենիքի գոյութեան հարարութեամբ, մեր լիներութեան անվարան կամքով ու համագգային մեր իղձերով:

(հայրապետական Անդրանիկ Կոնդակից, 5 փերրվարի 2000 թ.,

«Էջմիածին», Բ, էջ 5-7)



Երանելի է դարձր, Չորավար, երախարագեղ մեր ժողովրդի սիրո խընկարկումով, հաղթանակած հայ զինվորների թեերի վրա Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարից հայոց հանրապետության ղեկավարության ուղեկցությամբ՝ գլխավորությամբ հանրապետության նախագահի, հայրապետիս և զինվորայ միաբանությանն աղոթքով, հպարտ Եռագույնի ներքո ճանապարհվում ես դեպի բարձունքը աննահների, ուր հայրենաբաղձ, րենջավատ հոգուդ հրճվանքով ընդառաջ եև գալիս լույս հոգիները բյուր գավալներիդ, որ նոր նահարակներն եև վասն հայրենյաց, վասն հավարի՝ մարտի ելած նան քո անվամբ, հայացքի առջև քո թանկ պարկերը՝ կրճբիդ շողացող Սուրբ Լուսավորչի շքանշանով:

«Գործս կիսար մնաց» խոսքդ նոր արժևորմամբ ու հնչողությամբ վերարին արձագանքում է հայ հոգիներում: Գործիդ շարունակման վկան է ալաօրը, որով, խոսքիդ համաձայն, «հավարքով միարժվում եևք դեպի ապագան»: Այօր Չորավարիդ աճյունը չէ միայն, որ ամփոփում եևք հայրենի հողում, այլև կոթող եևք կանգնեցնում անթաղ ու անչիրիմ հայրենյաց պաշտպան բազում հայորդյաց՝ մեր երկրի սրբում ու մեր հոգիներում անթեղելով ձեր սերը առ հայրենին, ազարարենեց ոգին ու հավարը հայոց գալիքի հանդեպ: հաղթապասկ սուրդ, սիրելի Չորավար, որ բազմիցս շողացել է ազարության ու արդարության հույսի ցուբերով, խաղաղ ու շինարար կյանքի երագի փայլով, քո ամուր ձեռքում դարձել է հրավեր ու կոչ հայոց միության, արարումի իր այս խորհրդով հայոց արենն է պարզվել այօր երագ քո հայրենիքում, Սուրբ Էջմիածնում, ուր 80 րարիներ առաջ պարյան դրեցիր ու այն հանձնեցիր լուսահողի Գևորգ Ե Անենայն հայոց Կաթողիկոսին: Թող շեղբը արիդ խաղաղության անամայ կապույտը անդրադարձնի Մայր հողին առմիշտ և եերկի հայոց հոգին արեղծագործ ու հողը պրդաբեր՝ հայորդյաց մրաց ու ձեռքի արգասիքների արեագույնը բազմապարկելով հայրենի երկնքում: Թող լեռնակիար մեր հայրենիքի բարձր երկնքից հույսի, հավարի, Սիրո լույսերի արբացողանքով կոչնականեց սուրդ միավորի հայ հոգիները ի սիյուսու աշխարհի:

(Մայր Տաճարում Չորավար Անդրանիկի համար հոգեհազարյան կարգի ժամանակ ասված խոսքից, 20 փեբրվարի 2000 թ., «Էջմիածին», Բ, էջ 11)



Ազարության, արդարության քրիստոնեական ըմբռնումից, քրիստոնեական բարոյականի կենդանարար ակունքներից բխեցին համակեցության արդի քաղաքակրթության սկզբունքները՝ րարբեր րեսությունների մեջ, պարունական անցուդարձերում երկու հազարամյակ հղկվելով որպես

մարդու և ժողովուրդների իրավունքների չափանիշներ: Զրիստոնեական վեներաբլներով ծնունդ առնելու մարդկային մարքի, հոգու ու բազկի բյուր արարումներ կենսավորելով ամենահաղթ սիրող Ավետարանական անսանց ճշմարտությունը որպես պայման ու երաշխիք խաղաղության և հաշտության, կյանքի անընդմեջ զարգացման ու առաջընթացի:

Արդարև, որքան մխիթարական է «ճանաչել զՆա և զգործոթին Յարութեան Նորա», որ հաղթահարելով ժամանակ ու փարածություն, աստվածային Իր սիրով փշրում է մեղքի կարծրությունը մարդկային հոգիներում և պարզևում է շնորհը՝ ճշմարտությունը ճանաչելու, և ազատությունը՝ ընկրելու Բարին ու դեպի Աստված փանդող կենդանարար ուղին:

Փա՛նք Զրիստոսի ամենազոր Կարության:

Նոր դարաշրջան է բացվում աշխարհի վրա՝ հասարակական կյանքի նորացող ընթացքով, ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների նոր պահանջներով: Ազգային գորեղ պետականությանը միայն կարող ենք լիարժեք մասնակցություն ունենալ ժողովուրդների բազմակողմ ու հարսնուն համագործակցությանը: Ուրեմն, ո՛վ, եթե ոչ՝ մենք, հոգևորական ու աշխարհական բոլոր դասերով, ե՛րբ, եթե ոչ՝ այսօր կոչված ենք զորացնելու ազատ ու անկախ մեր Հայրենիքը, միաբանվելու նրա շուրջ և համազգային միությանը կերպելու հայ կյանքը աշխարհասփյուռ:

Արդարև, ամենքս պարզք ունենք մեր պատմության ու մեր գալիքի առջև, ինքներս մեր՝ մեր աստած դժվարին, բայց հույսով ու հավատով լի փարիների առջև, այս հողը մեզ համար շահած ու պահած մեր սուրբ ևս-հարակների ու ևսխնյաց առջև, այս հողը մեզ շնորհած Բարձրյալ Աստծո առջև: Թերահավարտությունը, սիրելիներ, մենք վաղուց մերժել ենք մեզանից: Արդ, չորժենք սրբազան մեր ոխալը Արարարի ու Սուրբ Էջմիածնի հեր: Քաջակողով ու պարտաստական սրանձնենք մեր պատասխանարկությունը և ծառայության մեր բաժինը՝ հավարարին մեր Փրկչին, որ հոժարակամ երկնից երկիր խոնարհիլեց ո՛չ «ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իր անձը փալու որպես փրկություն աշխարհի» (Մարտ. Ի 28): Մեծահրաշ այս փոռին առաքյալների օրինակով, որ Կարությանը գորեղակոչված՝ հին հանդերձի պես թոթափեցին հուսահարությունը և դարձան անվհատ ու անվեհեր քարոզիչներ, նորոգենք հավատը մեր հոգիներում՝ իբրև Աստծո հավարարին «նոր ժողովուրդ», որպեսզի սուրբ սրտով և անկեղծավոր հավատով փոռախմբենք 1700-ամյա փառաշուք փարեղարձը առաքելահասարակ ու առաքելագործ Հայ Եկեղեցու:

(Կարության պարգամից, 23 ապրիլի 2000 թ., «Էջմիածին», Դ, էջ 4-6)

Ամենայն հայոց հայրապետիս մաղթանքն է, որ դեպի Եդեռնի հուշարձանները առաջնորդող մեր ուղին վասն հայրենյաց, վասն հավարի ուխտի ևորոգման ճանապարհ լինի մշտապես, զորացնելով մեզ միաբանելու ազգային մեր կյանքը, խաղաղ երկնքի ներքո շեն ու բարձր դարձնելու անկախ մեր հայրենիքը, ուր խորացրել ենք պարկերը «կորուսյալ» մեր երկրի՝ Նոր Արարկիրով, Նոր Խարբերդով, Նոր Զեյթունով, Նոր Կիլիկիայով, Նոր Մայաթիայով: Արդ, մենք, որ զորու եղանք վերքն ու ցավը արարող ուժի վերափոխել, գործենք ու կերպենք հայրենադարձության հայրենաշեն ոգով, որպեսզի երբեք չխոնարհվեն սրբության փառարկերը մեր հողում, որպեսզի երբեք և ոչինչ այլևս չհարձնի մեզ աքտորական ու գաղթական, և խաղաղասեր ու սրեղծագործ ժողովուրդը մեր մշտապես չարին բարիով հաղթողի վարսահությանը, հավատով ու հույսով ևայի գալիքին:

(Ծիծեռնակաբերդում ասված խոսքից, 24 ապրիլի 2000 թ.,
«Էջմիածին», Դ, էջ 12)

Արդարև, սիրելիներ. Խրիմյան հայրիկը մեր ժողովրդի այն զավակներից էր, որը որքան հեռանում է մեզանից, այնքան ավելի է ընկալելի դառնում մեզ համար նրա մեծությունը՝ անձի և գործի: Մեծ հայրենասեր, նվիրյալ հայրենյաց, մեծագույն ուսուցիչ դասադասարան: Խրիմյան հայրիկի հոգին այսօր, կարծում են, պետք է որ խոսի յուրաքանչյուր հայորդու, որովհետև այն զգացումները, այն մտածումները, այն ոգին, որ փրոփում էր Խրիմյան հայրիկի կրծքի ներքո, համահունչ է մեր այս ժամանակներում ապրելու, հարստանելու, հայրենիքը շենացնելու, հայրենիքը զորացնելու պահանջներին, որ անհրաժեշտ է ներդրվի յուրաքանչյուր հայորդու կողմից հայրենական կյանքից ներս:

(Խրիմյան հայրիկի շիրմի առջև ասված խոսքից, 4 ապրիլի 2000 թ.,
«Էջմիածին», Դ, էջ 14)

Մենք եկել ենք հարգանքի խոնարհումը բերելու մեր ժողովրդի արժանավոր զավակաց: Նրանց ոգին կրթել է սերունդներ, նրանց ոգին ուղեկից է եղել մեր զավակաց, մեր կյանքի դժվարին ու ծանր օրերին մեզ գորեպնդել, մեզ աշխատել է: Մեր մաղթանքն է, որ արժանավոր մեր զավակների շիրմները շարունակեն խանդավառել ձեզ, շարունակեն ոգի դառնալ ձեզ համար, որպեսզի կարողանանք ապրել այն երազների համաձայն,

այն իղձերի համաձայն, որ ունեցել են այսպես իրենց հանգիստը գրած մեր ժողովրդի զավակները, և կարողանաք այդ երազները կյանքի կոչել, իրականություն դարձնել: Այսօր Հայաստանի անկախության ձեռքբերումով մենք մասամբ իրականություն ենք դարձրել նրանց երազները, սակայն հայրենի անկախ պետականությունը պետք է ամրացնենք մեր աշխատանքով, մեր քրտինքով, նաև ափսոսքի գորեղ կյանքով: Իմ՝ Հայրապետիս խնդրանքն է ձեզ. միջոք այցելեք մեր մեծերի շիրիմներին, աղոթք բարձրացրեք նրանց հոգիների համար, խոնարհվեք նրանց հիշատակի առջև և ունկնդիր եղեք նրանց պարգամներին ու խորհուրդներին, որ մեր հավերժության խորհուրդն է պարունակում:

(Թբիլիսիի Խոջիվանքի Հայոց Պանթեոնում ասված խոսքից,
11 մայիսի 2000 թ., «Էջմիածին», Ե, էջ 13)

Մարդկային կյանքի առաջին կարողներից է դպրոցի հանդեպ կարողը, որը, թանկ մանկության ու պարսկանկության հուշերով, ընտանիքի, հարազատ բակի ու ծննդավայրի ջերմության հետ անբաժան մասն է դառնում առ հայրենին մեր ունեցած մեծ սիրո: Աստվածաբան է Հայրենիքը, երկնաշնորհ: Երջանիկ եք դուք, սիրելի շրջանավարտներ, որ հասակ եք առել անկախ Հայաստանում, սնուցվել ազատության շնչով, հավարտի և հայրենաց ավանդների վերաբժանումով: Պարմությունից ձեզ հայրենի է, թե որքան կարևորել են մեր նախնիք մեր երկրի ազատությունն ու անկախությունը, որքան արյուն հեղել, ջանք թափել՝ կորցնելուց հետո այն վերագրելու համար: Այո, հոգաւար են այսօր մեր Հայրենիքն ու ժողովուրդը, սակայն ազատությունն է այն արժեքը, որ պայման է դառնում արարումների, բարգավաճման ու բարօրության: Կեղծիքից, ստրկամարտությանից, անցիտությունից ազատ ձեր հոգու պրացքներով է կերտվելու նվիրական մեր Հայրենիքի այսօրն ու գալիքը: Դուք թանկարժեք, ոսկեղեն հունձքն եք մեր, որ խրատացած ազատության մեր արեգակի հորդավատ լույսը, հայրության նվիրական իղձերի կենսավորումով պրոպագանդա եք ազգային մեր կյանքը: Վարսահ քայլեր ձեր ճանապարհով, կրեք ձեր կարևորության գիրակցությունը, շիրակ, աներկբա ու անվախ սրանձնեք ձեր բաժին պարասխանաբանությունը: Ձեր ջանադիր, անխուճ, արեղծարար աշխատանքով, ձեր հոգու ջերմությամբ ու ձեռաց գործերով իմաստավորեք ու գեղեցկացրեք ձեր ու ձեր հարազատների, մեր ժողովրդի կյանքը, մեր մայր հողն ու երկիրը: Հավատարմությամբ ծառայեք մեր հայրերի Աստծուն, գորացեք հավարտով, հինավուրց մեր պարմությամբ ու մշակույթով, աղոթախոս անցեք կյանքի ձեր ուղին:

(Երջանավարտներին ուղղված խոսքից, 26 մայիսի 2000 թ.,
«Էջմիածին», Ե, էջ 41)



Իր կյանքի 67 փարիկներից 50-ը հոգևորյա հայրապետն ապրեց իբրև ապաստարար Ասրժոն, հայ Առաքելական մեր Մուրք Եկեղեցու, հայրենիքի ու մեր ժողովրդի՝ սարկավազությունից մինչև Ամենայն հայոց Կաթողիկոս իր ճանապարհը անցնելով անդու ու անխոնջ ջանադրությամբ, հավատքով, սիրով ու նվիրումով: Հոգևորականի առաքելությունը, որպես անմնացորդ նվիրումի ծառայություն, իր կյանքի իմաստն էր ու երջանկությունը: Այդ առաքելության մեջ նա եղավ մեծ, շնորհալի ու անձանձիր ուսուցիչ, որ լավագույնս գիտեր ճանաչողություն ու գիտելիք փոխանցել, բայց առավել նա՝ ոգի ներարկել, քրիստոնեական ճշմարտության լույսով ու հայրենևյաց սիրո հրայրքով հայ հոգիներ կերպել ու բյուրեղացնել: Նա գրչի մշակ, լայնաստի մտավորական էր, հաստ ազգային ու համաշխարհային մտքի նվաճումներին, կարող ինքնօրինակ աշխարհընկալումով ու մտածողությամբ սրեր-ծագործելու, խորենացիական չափանիշերով դարերի խորհուրդը բացելու, նարեկյան խոտով Ասրժոն հեղ խոսելու, մարդկանց հոգիներին զրուցակից լինելու: Հարազատ ու հավատարիմ հոգևորականն ու զավակը հայ ժողովրդի իր արմատներում, իր արյան մեջ կրում էր հայրենի հողի կարտուր, պաշտամունքը հայրենի փան, որ իր բնորոշմամբ՝ սկիզբ առնելով Արարապի փեշերից, վերադառնում է դեպի Արարարի փեշերը՝ բոլորակի և լայնածիր ներառնելով ազնվարունի իր ժողովրդի անցյալն ու ներկան, ձեռաց, հոգու և մտքի արարումները:

(Գարեգին Ա Ամենայն հայոց Կաթողիկոսի վախճանման փարեյիցի առիթով
ապլած խոսքից, 25 հունիսի 2000 թ., «Էջմիածին», Զ, էջ 4)



Լուսավորիչը երեք լուսո խորաններ բարձրացրեց մեր ժողովրդի կյանքից ներս: Առաջին լուսո խորանը հայոց պետականության հաստատումն էր, երբ հիվանդությունից բժշկեց Տրդատ Գ արքային: Երկրորդ խորանը կանգնեցվեց մեր հայրենիքի մեջ: Դա Մուրք Սեդանն է՝ հայոց Եկեղեցու, որ մշտապես քրիստոնեական Ավետարանի լույսն է ճառագում մեր ժողովրդի զավակաց հոգիներից ներս: Երրորդ լուսո խորանը հայ դպրոցի լույսի խորանն էր: Հայ ժողովրդը Լուսավորիչ հայրապետի այս պարզամը նվիրականորեն ծրարեց իր հոգու մեջ իր պարմության ողջ ընթացքին: Դաժան ու դժվարին պարմություն ենք ապրել, հաճախ կորցրել ենք մեր պետականությունը, բռնի վրարվել մեր հայրենական երկրից, բայց ուր էլ ուր կայք ենք հաստատել, հավատարիմ Լուսավորիչ մեր Հոր պարզամին, առաջնաշին խնդիր ենք նկատել մեզ համար կառուցել լուսո խորանը մեր Մուրք

Եկեղեցու, և նրա կողքին հայոց դպրության, հայոց դպրոցի լուստ խորանը, որպեսզի քրիստոնեական Ավերարանի լույս պարզամաների հեղուկ ևս հայոց բանն ու բառը, հայոց գիրը լուսավորի միտքն ու հոգին մեր ժողովրդի զավակաց: Իսկ եթե չենք ունեցել երրորդ՝ պերականության խորանը մեր կյանքում, ապա տեսիլքն ու երազը միշտ վառ ենք պահել մեր հոգիներից ներս: Մենք գոհությոն և փառք ենք առ Աստված բարձրացնում, սիրելի բարեպետը հայրդիք, որ մեր կյանքի նոր շրջանում առկա են այսօր լուստ այդ երեք խորաններն էլ: Այսօր, 80 տարիների աստվածամերժության շրջանից հեղուկ, վերստին հայոց դպրոցում կանար է կապել քրիստոնեության քարոզչության ու դաստիարակության լուստ խորանը, և հայու զավակը վերստին ունկնդիր է Բրիտանի Աստվածային պատվիրաններին ու պարզամաներին և մեր սրբազան հայրերի հավատը վարդապետությանը:

(Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում խոսված քարոզից,
14 հոկտեմբերի 2000 թ., «Էջմիածին», Ժ, էջ 12-13)

Նայաստանի նոր անկախության հեղ ծնունդ առաւ Վազգէնեան դպրանոցը, մեր ժողովրդի համար դժուարին, բայց յոյսով ու լուսաբանությամբ, ազգային մեր իղձերի իրականացման խանդավառությամբ լեցուն օրերին, երբ շրջափակման օղակը իր բոլոր ծանր հետեւանքներով անլի ու անլի սեղմում էր Նայաստանի շուրջ, ասկայն չէր կարող ու չկարողացաւ խեղդել հայրենի մեր եզերքներում թեւածող ազատության բաղձանքը, լոնցնել արդարության ձայնը եւ մեր նախնեաց կանչը: Արդարեւ, «սերնանի փկարութեամբ եւ յառնէ զօրութեամբ»: Այսօր հասաւ է առել դպրանոցը, առնակաւնացել ու հաստատուել իր սուրբ կոչման մէջ՝ Աւերարանի կենաց խօսքով ու հայրենեաց սրբազան ժառանգութեամբ կրթելու, ազատության շնչով հասունացնելու եւ Նայ Եկեղեցու անդաստանում անասկարկ ծառայութեան առաջնորդելու հոգեւորականաց հաստատոր ու նուիրեալ, գիրակ ու կարող սերունդներ:

(Սևանի Վազգենյան Դպրանոցի փաստանյալի առթիվ փրված Կոնդակից,
5 դեկտեմբերի 2000 թ., «Էջմիածին», ԺԲ, էջ 7)

Ծաղախեմք մեր կյանքը սիրով: Մերը իշխանավորի՝ բարիք ու շինություն է երկրին, սերը եկեղեցականի՝ հավատը, ապրելու բերկրանք ու աշարելու կամք է ժողովրդին, համընդհանուր սերը՝ համազգային առաջընթացի

ու սպասողության, վաղվա երջանիկ օրվա պայման: «Մեր ոչ երբեք անկյանի»: Յուրաքանչյուր առանձին և բոլորս միասին ազգային մեր կյանքում արժևորենք հորեյականական երբ փարին: Տավարանք, աղոթենք ու ձգտենք, որ 1700-ամյակի վսեմ խորհուրդը արթնացնի մեր մեջ հայի Բրիտանացի, որ արժանապարհիվ հոգին: Նոր կյանք սկսենք՝ վերադարձաբերող մեր սուրբ հավարին, եկեղեցական-ազգային ավանդույթներին՝ պարունելով խորթ ու օրաբար բարքերի հոսքը մեր դեպի Հայրենիք, հայ իրականություն: Բավարար չէ միայն անունով քրիստոնյա լինել, հավարավոր գործերով վկայենք, որ արժանի ենք «քրիստոնյա» անվանը և քրիստոնյա առաջին պետությունն ունենալու պարտին ու պարասխանաբարությունը, մեր հայրերի Ասրծո օրհնությանն ու շնորհներին:

(2000 թ. դեկտեմբերի 31-ին հեռարձակված փարենուրի պարզամից, «Էջմիածին», 2001 թ., Ա, էջ 4-5)

301 թուականին Ս. Լուսաուրցի անմեղ հայեացքով մեր ժողովուրդը արժանացա րեսնելու Յարուցեայ Փրկչի լուսնդէն էջքը հայրենի իր հողում: «Էջ Միածինն ի Տօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» փառաբանութեանը աշխարհը Հայոց առաջի Ասրծոյ կանգնեց խոսարովանութեան ու րեսնուագրեց երկիրը իր հին՝ աշխարհում առաջինը հոգակելով քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն: Համայն ժողովրդով հաւարացիներ համակ Մեր, Միակ Ըջնարիւր Ասրծուն, Ս. Ծննդեանն ու Մարդեղութեան փրկչական առաքելութեանը Նրա: Հաւարացիներ Գողգոթայի վրայ Խաչեայի յաղթական Յարութեանը: Եւ Յարութեան յոյսին խարսխուած կեանքն արիիացա Հայոց աշխարհում, Հաւարի, Յոյսի, Միրոյ գոյներով դրոշմունեց մեր լեռներին, երկինք լայող մեր վանքերին, իսաքարերին, ծաղկեց աղօթախօս մարեաններին, րիեզերքը լուսերգութեանը ազնուացնող րաղին, շարականին: Ասրծոյ շնորհը գրասք՝ մարգարէի խօսքի համաձայն. «Եւ րաց լոցա սիրտ այլ, եւ ճանապարհ մի՝ երկնէլ յինէն զամենայն աւորս ի բարութիւն իրեանց եւ որդոց իրեանց յեր լոցա» (Երեմ. ԼԲ 39): Ասրծոյ շնորհն ընդունեցինք ի բարութիւն մեզ եւ այն կեանքի ճանապարհ, շնորհ դարձրեցինք: Յոյս գրասք մեր անյուսութեան մեջ, անգիրութեան մեջ՝ ինացութիւն, մեր թուրթեան մեջ՝ ուժ, եւ օրհասի մեջ՝ վերածնունդ:

Այսպէս, սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, ուխտ կապեցինք Ասրծոյ հետ: «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ» հաւարով ու գիրակցութեանը եւ մեր յանրժողութեան խորհուրդ Մայր Տանարով կամարեցինք Միածնի Էջքի Մորք Սեղանը՝ Խորանը Ուխտի՝

որպես Ասորոյ որևսահպումի երկնահայեաց բարեղէն դրոշմ, որ 17 դար սերնդէ-սերունդ պարկերագրում է հայորդեաց հոգիներում:

Արդարև, մենք մեծաթիւ ժողովուրդ չենք եւ երբեք չենք եղել: Բայց մեր հաւաքը՝ գործերի փոխում, դարձրել է մեզ մեծագործ ժողովուրդ: Տաւարի գործերով մենք մարմնաւորել ու հաւասարել ենք մեր սերն առ Ասորուս: Տաւարով մենք մէկ ենք որպէս Տայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, որ հաւարի կենդանի գործերով «դէպի երկինք բարձրացող գաղղի ճամբայ մը ունի»: Հայ Եկեղեցին հայ ժողովուրդն է՝ քրիստոնէական սուրբ հաւարով միասնական, ինքն իրեն Հայ Եկեղեցիով ճանաչող ու արդարաբար: Նայենք հայ կեանքի անդամաստաններին: Քրիստոնէական համամարդկային արժէքներով, ազատութեան, արդարութեան, խաղաղութեան ձգտումներով է հանդերձաւորուած հայ ինքնութիւնը, որով, հակառակ մահաշունչ փորձութիւնների, դարերի մէջ արարել է միջոց, ի գործ գրկունել հաղորդ լինելու եւ ներդրում բերելու մարդկային քաղաքակրթութեան առաջընթացին: Հայոց Սուրբ Եկեղեցուց պրիւրացող հաւարով կեանք առած աշխարհասփիւռ հայ հոգիները հաւարով դարեր են կամրջել՝ հասարարուն ու կենսունակ պահելով մարդկային այն առանձնայարտու ընդհանրութիւնը, որ «ազգ» եւ «ազգային» ենք կոչում: Տաւարն է՝ ոգեկշնչել ու թել րունել մեր բոլոր յայթանակներին: Հարանց մեր հաւարով զինավառ՝ մեր ժողովրդի զաւակունք չեն երկնչել մահից՝ յսնուն հայրենեաց պայքարում մահկանացու իրենց կեանքը բազմիցս զարդարելով անմահ փառաց պսակով: Տաւարով մերժել ենք սուրն ու երեսպաշտութիւնը, վարտութիւնն ու վախկտութիւնը, հաւարով սիրել ու նուիրունել մեր ընդանիքին, Հայրենիքին, Եկեղեցուն, հաւարով ապրել Ասորոյ հետ ու արժանացել ամենատար օրհնութեանը Նրա: Այո՛, սիրելիներ, չկա՛ մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է մեր հաւարը, քանի դեռ հայոց պարմութեան ընթացքով յայթականօրէն անցնում է լուսեղէն թափօրը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հաւարը ու խմորելով հոգի, հաւարարմօրէն պահելով մեր ժողովրդի ընթացքը դէպի Ասորուս:

(1700-ամյակի առթիվ արված կոնդակից, 6 հունվարի 2001 թ.,

«Էջմիածին», Ա, էջ 7-8)

301 թուականին չվարանեցիկը քրիստոսահարած հեթանոս աշխարհում պերականօրէն պարզել Քրիստոսի ազատութեան խաչանիշ դրօշը, որ երբեք չի խոնարհունել մեր հոգիներում, երբ անգամ կորցրել ենք ազգային մեր պերականութիւնը: Խաչանիշ այդ դրօշով ընդամենը մէկ ու կէս դարում կերտեցիկը հայոց ինքնաճանաչման, ինքնարարաբարման ու ինքնահարարման Ասորուսձգեաց դպրոցը, ուր ուսուցանում է Յարուցեալ Երկնա-

յին Վարդապետը: Խաչակիչ այդ դրօշով ապրեցինք՝ ժառանգականության կենդանի կապով հաղորդ ու համարարինք Լուսավորչի, Ներսես Մեծի և Մահակ-Մաշտոցի՝ հայ հոգու, սրբի ու մարգի լուսավորության, Զաքն Վարդապետանց՝ հայ ոգու յարթության անմահ դպրոցին:

Տայոց Բարձի 1700-ամեակի փոսակարարության նշանակալի այս փառում, սիրելի հայրորդիներ, ուխտեր մեր հոգիներում արթուն պահել յարթական այդ դպրոցի զօրատր ոգին, ապրելք Յարուցեալ Փրկչի ներկայութիւնն այնպէս, ինչպէս Յարութեան համարին վարսեալ մեր նախնիք, որպէսզի մեր խօսքը չհնչի դարարկ ու անբեղի, և մեր գործը չլինի արժեզուրկ ու աննպարակ, այլ ծառայի հայրենական մեր կեանքի շինութեանը, քար աներացնի անկախ մեր Տայրենիքի հօգրութեան կառոյցին, շաղախ՝ հայոց միաբանութեանը, լոյս՝ պայծառութեանը Տայսարանեայց Առաքելական մեր Մուրք Եկեղեցու:

(Տարության պարգամից, 15 ապրիլի 2001 թ.,

«Էջմիածին», Դ, էջ 5)



Անապատի փոթակեզ քամին ավազով ծածկեց անթաղ մնացած ձեր աճյունները: Բայց մի՞թե Բարձրայի աջքից կարելի է թաքցնել մարդկային ջարհերը, մարդկային ամոթը: Մի՞թե ոճրապարտ մարքով ու ձեռքով գործվածը, որ սրարեց ու բնավեր արեց սրեղծարար հնագույն մի ժողովրդի, կարող է մոռացության շղարշով պարվել ու ջնջվել սերունդների հիշողությունից:

Մուրք Էջմիածնի 1700-ամյա Միածնաւեջ Լուսն Խորանի օրհնությունն ենք բերել նահապակներից նշխարներին, Մուրք Լուսավորչի Կանթեղի լոյսը մշտադառն: Եկել ենք ուխտի, սրբազան երդման: Եկել ենք ձեր՝ Զրիարոսի խաչակիցներից հազարավոր անհայր անունների հիշարակումով մեր ուխտը առ Աստված հասարակելու, համազգային մեր միասնականությունը նորոգելու և մեր հավատը զորացնելու արդարության հաղթանակի հանդեպ: Եկել ենք ասելու ձեզ, որ ամեն ապրիլի 24-ի, նաև այսօր, հայ ընդունակներում զավակներ են ծնվում՝ հայրորդիներ ու հայուհիներ, որ Առաքելական մեր Մուրք Եկեղեցու ավագանում մկրտվում են ձեր անուններով:

(Դեր Ջորում ասված Հայրապետական խոսքից,

24 ապրիլի 2001 թ., «Էջմիածին», Դ, էջ 10-11)

Մեր ժողովուրդը հաղթահարել է երկրաշարժի, շրջափակման, Արցախյան ազատամարտի ամենամեծ դժվարությունները: Հաղթահարել է միասնաբար, հայրենասրբանկատ և սիյուրքի իր զավակների միացյալ ջանքերով: Վերըստին ազատ ու անկախ է հայաստանի հանրապետությունը, ազատագրված է Արցախը: Մայր հայրենիքն ու Եկեղեցին վերագարթների օրեր են ապրում: Փառք մեր հայրերի Աստծուն, որ կրկին իջավ և ամեն օր ավելի ու ավելի է մտրեկնում աթեիզմի հարվածներից վիրավոր մեր ժողովրդի սրբփին, մեր մանուկների անմեղ հոգիներին և Սուրբ Հոգու յոթնարփյա շնորհներով լցնում մեր հայրենիքը: Նոր օր է բացվում հայոց կյանքում, Մայր հայաստանում: Վճռորոշ այս շրջանում հայրենիքը կրկին կարող է իր զավակների գորակցությանը: Հայրենիքը կանչում է մեզ: Տարակույսների, անվստահության, փրփրունցի ու սպասումի ժամանակը չէ. զինվե՛ք հայրենյաց սիրով, լցվե՛ք լավարեւտությամբ՝ հավատարմոր գործերով կառուցելու հայոց կյանքն իմացյալ, որ զկանգնե՛ք երբեք մահն իմացյալն ընդդեմ ունեւրածուրության առջև: Արդ, համախմբվե՛ք և համախմբե՛ք մեր ուժերը՝ ամրապնդելու համար թանկ գնով ձեռք բերված նվաճումները և վերակառուցելու հայրական մեր րունն ընդհանուր: Դժվարություններ ապրող մեր՝ օրյա հայրենիքը վաղը՝ բարօր, բարգավաճ ու հզոր, պիտի միավորի իր որդիոց և ոգեշնչի ու փայլ հաղորդի հայ կյանքին աշխարհասիյուր: Ապավի՛նե՛ք մեր միասնության արարող գործությանը և հավատով նայե՛ք հայոց պայծառ գալիքին:

Աղոթախոս անցնե՛ք կյանքի մեր ուղին, մեր հոգիներում վառ պահե՛ք Լուսավորչի Կանթեղի լույսը, որ նոր ներշնչանքով ու սիրով դարձնի մեր հայացքը դեպի երկիրն Արարարի, դեպի Սուրբ Էջմիածին: Ուր էլ ապրենք, մենք բոլորս զավակներն ենք նույն ժողովրդի, հայ Առաքելական մեկ Եկեղեցու: Ուր էլ լինենք, պահենք մեր հավատարմությունը հայրենյաց սրբություններին, որով պայմանավորվում է մեր արժեքը որպես մարդ և որպես հայ: Աղոթենք, որ 2001 թվականին սկսված 1700-ամյակը ազգային-քրիստոնեական մեր կյանքում լինի սկիզբ, որ չունի վախճան: Աղոթախոս անցնե՛ք կյանքի մեր ուղին, մեր հոգիներում վառ պահե՛ք Լուսավորչի Կանթեղի լույսը, որ նոր ներշնչանքով ու սիրով դարձնի մեր հայացքը դեպի երկիրն Արարարի, դեպի Սուրբ Էջմիածին: Ուր էլ ապրենք, մենք բոլորս զավակներն ենք նույն ժողովրդի, հայ Առաքելական մեկ Եկեղեցու: Ուր էլ լինենք, պահենք մեր հավատարմությունը հայրենյաց սրբություններին, որով պայմանավորվում է մեր արժեքը որպես մարդ և որպես հայ: Աղոթենք, որ 2001

թվականին սկսված 1700-ամյակը ազգային-քրիստոնեական մեր կյանքում լինի սկիզբ, որ չունի վախճան:

(Նյու Յորքի «Մենթրլ Փարկում» մաքուցված բացօթյա Հայրապետական Պարարագի ժամանակ սաված խոսքից,
27 մայիսի 2001 թ., «Էջմիածին», Ե, էջ 31-32)

Մայր Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինն այսօր Հայոց համազգային մկրտությունն ու Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի սրանցնի խորհրդով իրենց սիրառար գիրկն են բացել ձեր առջև և համախմբել ձեզ նախնյաց սուրբ հողում՝ Հայաստանի մարզերից ու աշխարհի փարբեր երկրներից: Դուք բոլորդ հարազատ որդիքն եք հինավուրց մեր ժողովրդի, որի հիշողությունը մարդկային քաղաքակրթության վաղնջական ժամանակները անընդմեջ արարումով կանթում է 21-րդ դարի նոր այգաբացին: Փոքրաթիվ ժողովրդի մեծ ժառանգության րերերն եք դուք, սիրելիներ: Մեր հողը մշակվել ու մարդուն արդյունք է րվել դեռևս քարե գործիքներով և առաջին մերսող գործիքներով, ոռոգվել է պարմությանը հայրենի հնագույն ջրանցքներով: Ուր որ նայեք, հիշարակներ են հին ու նոր ժամանակների ծանոթ անուններ՝ ավանդություններ ու հուշարձաններ: Դուք ժառանգել եք հարուստ լեզու, մարդկային հոգիներն ու րիեզերքի խորքերը քննող բազմազան մշակույթ: Այդ ժառանգության մեջ ամենամեծ գանձը, սիրելիներ, որ սրբորեն պահվել ու այսօր փոխանցվում ու վարասիվում է ձեզ, քրիստոնեական մեր հավարն է՝ մեծագույն շնորհը Ասրծո, որ իմաստ է րվել մեր ժողովրդի կյանքին, նկարագիր՝ հայ էությանը, ու դարձել մեր գոյության խորհուրդը:

Ուխտավորի հուսառար հոգով ձեր քայլերը ուղղեք դեպի մեր սրբալեռիները. հպվեք մեր նախնյաց աղոթքի ջերմությունը պահած քարերին հինավուրց նկեղեցիների, վանքերի ու խաչքարերի, զգացեք ձեր արմարները կենսունակ և փառաբանեք Ասրծուն նույն սիրով ու հավարարմությանը, ինչպես դարեր շարունակ մեր հայերը, պապերն ու նախապապերը: Ծառն արմարով է ամուր և շինությունը՝ իր հիմքով, իսկ մարդու արժեքը՝ առ Ասրված իր հավարով: Զորացեք հավարով, և թող ամենայն ձեր գործերը հավարով լինեն ու ծառայեն Բարուն, հույսի ու սիրո արգասավորմանը աշխարհում, մեր անկախ ու ազատ Հայրենիքում, աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում:

(Երիտասարդական ուխտագնացության առիթով սաված խոսքից,
15 հուլիսի 2001 թ., «Էջմիածին», Զ-Է, էջ 10-11)